ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1932 – Մայիս – թիւ 5

էջ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՀԱՊԵՏԵԱՆ Հ. Գ. — Քրիստոնէական ճարտարապետութիւն (պատմական հետազօտութիւններ) 193

ԹՈՐԳՈՄԵԱՆ Տ. Գ. — Հայ բժշկական արձանագրաբանութիւն 210

Արբազան տաղերգուբիւն. — Տաղ Յարութեան 214

Տաղ խաչի 215

Տաղ Աստուածածնին 216

Տաղ Աստուածածնին (ի Գրիգորիսէ Աղթամարցւոյ) Հր. Փ. Հ. Ե. . . . 216

ԳՐԱԿԱՆ

ՍՐԱՊԵԱՆ Ա. — Համերգ մեռելական . . . 217

ՓԱՋԱՐԵՆՑ Հրաչ. — Մուրացիկները . . . 220

ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ Հ. Վ. — Հայ բանաստեղծ Սրապեան Ա. — Ս. Ղազար (Հայոց կըզին) – Գերեզմաննոցն ի Ս. Ղազար – Վանականներ – Իրիկունն ի Ս. Ղազար . . . 221 222

Carducci (Թրգ. Փ. Հ. Ե.) — Ողջ լեր, Մարիամ 224

ԹՈՄԱՃԱՆ Հ. Թ. (Թրգ.) (Յուշատետրի մը էջերէն) Ռինալտի. — Կամք և գործ – Մանուկն ու կաւը 224

ՈՐԲԵՐԵԱՆ Ռ. — Լորտ Պայրըն (ուսումն.) 225

ՏՈՊՃԱՃԵԱՆ Յ. — Փարիզեան պատկերներ . 231

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

ՓԻՒՐՏԵԱՆ Յ. — Խաղբակեանք կամ Պոռչեանք Հայոց պատմութեան մէջ (Գարեգին Աբք. Յովսէփեանի) 232

ՓԷՋԻԿԵԱՆ Հ. Ե. — Գերեզմանատուն Կաթողիկէ Հայոց Կ. Պոլսոյ (Հ. Յակոբ Ծ. Վ. Քօսեանի) 233

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆԳ

ԽԱՐ. — Պուլկարիոյ արքայազուններն և Սուրբ Մարիա Իշխանուհին ի Սուրբ Աստուածածնի Ղազար 237

Մխիթար Աբբահօր յիշատակը՝ ի Սուրբ Ղազար – Երուսաղէմի մէջ – Ի Վենետիկ, Մ. Ռ. Վարժարանի բարերարներուն և Ազգիլեան Նահատակներուն հետ . . 238

Հին ու նոր աւանդավէպ... (հայկական) 236

Պր. Գ. Կիւլպէնկեան հրաժարած. . 240

SOMMAIRE

1932 – Mai – numéro 5

p.

PHILOLOGIE

Nahabédian P. G. — L'Architecture des églises (recherche historique) . 193

Torkomian Doct. V. — Epighraphe médicale arménienne 210

Odes Sacrées : A la Résurrection. – A la S.te Croix. – A la Mère de Dieu (d'auteurs inconnus). – Ode à la Mère de Dieu (de Krikoris Aghthamartzi) *publ. par P. E. P.* 214

LITTERATURE

Srabian A. — Symphonie funèbre. . 217

Katcharentz H. — Les mendiants . 220

Horhannessian P. V. — Le poète arménien. 221

Srabian A. — St. Lazare – Le cimetière à St. Lazare – Les Moines – La soirée. 222

Carducci G. — Ave Maria ! (*Trad. par P. E. P.*) 224

Tomadjan P. T. — (Quelques pages d'un cahier de notes). *Rinaldi.* — Volonté et action – L'enfant et l'argile 224

Orperian R. — Lord Byron (étude) . 225

Dobadjian H. — Tableaux parisiens . 231

RECENSIONS

Kurdian H. — Khaghbaghiank ou Brochiank dans l'histoire arménienne (par Mgr. Karékine Hovsépian) . . . 232

Paitchikian P. Elie. — Cimetière des arméniens catholiques de Constantinople (par le R. P. J. Kossian) . . 233

ECHOS d'ARMÉNIE

Réd. — La visite des Souverains de la Bulgarie et de la Princesse Marie de Savoie à St. Lazare . . . 237

Commémoration de L'ABBÉ MÉKHITHAR, *à St. Lazare* : *à Jérusalem* : *à Venise* : commémoration des BIENFAITEURS du Collège et des MARTYRS arméniens (dans le Collège arm. Moorat-Raphaël) . . . 238

Une légende (arménienne) . . . 236

La démission de Mr. G. Gulbenkian . 240

ՄԵՐ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ

Կը խնդրենք մեր ապնիւ բաժանորդներէն որ բարեհաճին վաղվայ կարգադրել իրենց հին ու նոր տակաւ հաշիւները։



ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

ՊԱՏՄԱԿԱՆ ՀԵՏԱԶՕՏՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ ՏԵՂԱԿԱՆ Ի

Հայկ. ճարտարապետութեան զարգացումը Աբշակունեաց Թագաւորութեան ժամանակ

(Շար. տես «Բազմավէպ» 1932, էջ 101)

Ա. Հայը բնութեամբ նորաձեւութեան և զարգացումի սիրահար է, ուստի և նմանելու յօժարափոյթ։ Հայը՝ օտարատեաց չէ ի բնէ, այլ ընդհակառակն հիւրասէր, բարեսէր, ուստի ուր որ լաւ բան մը տեսնէ օրինակը կը վերցնէ, կը վերածէ և գործադրելու չի վարանիր։ Ձեռքը ուրիշէն փոխ կ'առնէ, բայց կ'ուզէ որ կանթեղը իր ձեռքը բռնած ըլլայ։ այս կերպ օգտագործութիւնը ոչ նուաստութիւն կը համարի և ոչ ի վնաս իր յատուկ ազգասիրութեան։ Դիտուած է որ Հայը, միայնակ անհատ մը, ամէն բանէ աւելի գործնական կողմը կը մտածէ, քիչ մը իր բախտակից հրեայ ազգին պէս։ այդ արիւնը խառնուեցաւ այն ժամանակ երբ Տիգրան Բ. Մեծն հրէից հազարաւոր գերութիւնը բերաւ բնակեցուց Հայոց մեծ քաղաքներու մէջ։ Անհատական Հայու արժէքը շատ մեծ գնահատուած է ամէն ժամանակ, ուստի առակ եղած է ըսել։ Մէկ հայը հազար կ'արժէ, իսկ հազար հայը մէկ մը չ'արժեր։ անոր համար որ իր յեսին խելքը ի սկզբան չի գործածեր։ Աւելորդաբար անհատին անգուգական կարողութիւնները, ուրիշ ազգերէ աւելի փայլեր են Հայոց մէջ։ մեր ամբողջ պատմութեան շէնքը իրաւ սիւներու վրայ յեցած է սովորականէն բարձր անձնաւորութեանց վրայ, հոն չկայ ժողովրդական ակումբ

digitised by A.R.A.R.@

կամ խորհուրդ որ տէրութեան գործերը քննէ, կշռէ և դատի, ինչպէս երբեմն Աթէնք և Հռոմ ունեցան, բարձրացան և տիրեցին աշխարհի։ Ուր որ ժողովուրդը գիտակից չէ իր բախտին, չունի հաւաքական հայրենասիրութիւն, նա տիեզերական – աշխարհական եղած չէ. այսպէս եղած է Հայոց ազգը, և այս իսկ է անոր տկարութեան պատճառը, զոր Խորենացին ալ զգացեր էր որ կը գրէր. «Զօրութեամբ տկար և ընդ այլով յոլով անգամ նուաճեալ թագաւորութեամբ»։ Վասն զի ժողովուրդը կոչուած չէր վարչութեան մաս կազմելու, այլ մի նախարար, մի իշխան, մի թագաւոր՝ բռնած էր վարչութեան սանձերը ձեռքը. եթէ թոյլ ոմն էր, սարկուութիւն էր նորա բաժինը. իսկ եթէ քաջ և ուժեղ էր որ կարենար խմբել իր շուրջը ազգը և խմբել իրարու հետ անջատ նախարարութիւնները, անոր ատեն, կ'ըսէ նոյն Խորենացին. «Բազում գործք արուեստի գտանին գործեալ և ի մերում աշխարհիս, և արժանի գրոց յիշատակի»։ Այսպիսի մէկն եղած է Արամ, որուն համար կը գրէ. «Սա այր աշխատասէր և հայրենասէր եղեալ, լաւ համարէր զմեռանելն ի վերայ հայրենեացն, քան տեսանել զորդիս օտարածնաց կոխելով զսահմանս հայրենիս»։ Ուստի առանց կուսակցական ոգւոյ, կը դիմէ ամբողջ ազգին և «ժողովէ զբազմութիւն ընտանի արանց քաջաց և աղեղնաւորաց, և որ ի տէգ նիզակի կամակարողք, նորատիք և հարուստք յոյժ յաջողաձեռնութիւն իսկ և երեսաւորք, որ ի սիրտ և ի պատրաստութիւն իրը թէ բիւրս հինգ»։ Այս միարան, միասիրտ և պատրաստակամ բանակով կը սրբէ և կը մաքրէ օտարներէն հայրենիքը, և կը վաստրկի համարում և պատկառանք Ասորեստանի հզօր արքային առջեւ, և «հրամայէ նմա զայն իշխանութիւն անկասկածարար ունել. և համարձակութիւն տայ նմա վարսակալ ածել մարգարտեայ, և երկրորդ իր կոչել»։ Վերջին հանգամանքը ցոյց կու տայ որ Հայաստան Ասորեստանցոյց կու տայ որ Հայաստան Ասորեստանցիին գերիշխանութեան տակն էր. սակայն Արամի իմաստութիւնը եւ բոլոր ժողովուրդի համագործակցութիւնը, բարձրացուց զիրենք «ազատ և անկախ հայրենիք մը ստեղծելու»։ Եւ այսպէս ուրիշ շատ օրինակներ, առանց մոռնալու Աշակունի և Բագրատունի քաջ թագաւորներու քաջագործներէն ոմանք։

Վերադառնալով իմ վերեւ յիշած հայկական նկարագրին, պիտի շարունակեմ ըսելու որ, համամարդկային զգացումներու գծեր անոր յատուկ նկարագրի առէջքը կը կազմեն. ուստի որ երկրի, որ կլիմայի և ազգի մէջ գտնուի կամ մերձաւոր շփումն ունենայ, իրը թէ իր բնիկ միջավայրի մէջ գտնուի, օգտուելով հանդերձ իր սեփական ոճով և ըմբռնումով, կը կերպէ իր ազգային տունն, հայ լեզուով և հայ կեանքով կ'ապրի և երբ ձեռներէց եղած է ճարտարարուեստի մը մէջ, անպատճառ իր ազգային կնիքը վրան պիտի դնէ և գործը հայու տիպարը կը պահէ, զանազանուելու չափ ազգի ազդեցութենէն. այնպէս որ կարելի չըլլայ ըսել՝ ծառայական։ Այդ բնաւորութիւնը կու գայ կուրծքին տակ ծածկուած մրցութեան եռանդէն, որ կ'արձարձէ հոգին ստեղծագործական շունչով. ինչպէս քարի մէջ նիրհած կայծեր շփումով դուրս կը ցատկեն, այսպէս և հայ միտքը բազմակիրթ աշխարհի հետ շփուելով, իր ներքին կարողութեան և ընդունակութեան կայծակներ կը սփռէ չորս դին։ Ինչպէս քաղաքական և զինուորական ասպարէզի մէջ տուեր է փայլուն դէմքեր, բաւական է յիշել մի քանի հայ կայսրներ Բիւզանդիոնի գահին վրայ, նոյնպէս և գեղարուեստի մէջ հինգերորդ դարուն հանեց ճարտարապետական անջատ գմբէթի նոր կարգ զոր կոչած ենք ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ. և Տրդատ ճարտարապետ մը որ հազար տարի առաջ փոխեց հինը և նոր բռնեց Ս. Սոփիայի գմբէթը, որ կը տեսնենք դեռ հոն, գմբէթի հիմերը կը կրեն հայկական արուեստը, եթէ անուրբ ձեռքի զայն չխախտեն։

Այս այսպէս լինելով, երկիւղ չունինք մեր հակառակորդներէն, որոնք կեղրոնական գմբէթաւոր ճարտարապետական կերտուածքի հակաճառութեանց մէջ, հաճոյք մը կը զգան նսեմացնելու Հայու հանճարը, դնելով զինքն իրը հետեւակ, բայց ճարպիկ իրացնող մը Հելլէն կամ Հռոմէական արուեստին։ Մենք մեր տկար ուժերով պիտի ջանանք ցուցընել թէ անհիմն է հետեւակ (qui imite servilement) առասպելը. վասն զի յառաջագունէն ըսինք, հակառակ կողմի գիտնական ճարտարապետներ կամ գեղարուեստ սիրողները, ոչ մի օրինակ ցոյց տուած են, փոքր Ասիոյ կամ Ասորիքի մէջ, գմբէթաւոր եկեղեցի մը որ լինի յար և նման Հայոց Կաթողիկէին՝ որ վեհօրէն թառեր է լորս անջատ սիւներու վրայ։ Տեսիլ ֆրանսացի ճարտարապետն որ 1843 ին ֆրանսական կառավարութեան հաշուով ճամբորդեց Արեւելք, ուսումնասիրելու և գծագրելու երեք աշխարհի հնութիւնները, նա անցաւ Փոքր Ասիայէն Ասորիք, Միջագետք, Պարսկաստան, և Հայաստան։ Հայաստանի հատորի մէջ մանրամասն նկարագրած է մանաւորապէս Անիի կիսաւեր եկեղեցիները, հիացեր է Կաթողիկէի և գմբէթի կառուցմանը վրայ. և կը յաւելու. «Ճարտարապետները կը հասկանան դժուարութիւնը մէն մի եկեղեցի ծածկել մի կոնով՝ որու մէջ կ'անցնի գլանակ մը և մէջը ձեւացնելով կլորակ գմբէթ մը. այսինքն երկրաչափական երեք ձեւեր իրարու հետ կը զուգաղրուին շինուածքն ամբողջացնելու[1]»։ Տեսիլ չ'ըսեր որ մի ուրիշ երկիր նման բան մը տեսած ըլլայ։

Հայ քարագործը դարերու ընթացքին հետ և փորձառութեամբ զարգացուցեր է այդ արուեստը. նա ոչ Աթէնքի և ոչ Հռոմի օրինակները (modèles) ունեցած է աչքի առջեւ. այդ կատարելութեան հասնելու համար, օտարներն անգամ համամիտ գտնուեցան մեզի հետ ըսելու, որ ներշնչողն եղած է իրենց պակերու հաւատքը և վարժապետը «ԱՄԵՆԵՑՈՒՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՆ» որ Սողոմոնին ալ սորվեցուց ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ։ Թէ ամէն հանճար աստուա-

ծատուր է, պէտք է նոյն ինքն Աստուծոյ բերնէն լսենք. արդարեւ Տէրն մարդի և ամպերու մէջէն այլ և այլ հարցումներ կ'ուղղէ առ Յոբ երանելին որոցմէն մէկն ալ հետեւեալն է. «Ո՞վ ետ կանանց իմաստութիւն ոստայնանկութեան՝ կամ հանճար նկարակերտութեան (պաստառներու և գորգերու վրայ)»։ Ըսել կ'ուզէ թէ ես եմ տուն տուողը, ներշնչողը. ինչպէս անասնոց մէջ բնազդ դրած եմ կերտելու, օրինակ, սարդին՝ ոստայնը, մեղուին՝ վեց անկիւնաւոր բջիջը, ջրշանն իր գմբէթաւոր տաղաւարիկն ցիցերու վրայ. այսպէս ալ հայ քարագործին ես տուի հանճար կերտելու իր հաւատքի երկնահանգէտ տաղաւարն և տապանակն ապրեցուցիչ։ Իսկ եթէ մէկը թերահաւատի մեր ըսածներուն եթէ մէկը թերահաւատի մեր ըսածներուն վրայ և ըսէ, ոչ մի բան յանկարծակի չէ եղած երկրի վրայ, երբ ինքն մարդն է գործաւորը. մենք պատրաստ ենք խօսելու այն ճարտարապետական նախատիպերուն վրայ, որոնք ճանապարհ բացին կատարելութեան հասնելու համար։ Այդ մասը յաջորդ յօդուածներու մէջ։

Լ.Ա. Ուրիշ տեղ ըսած ենք որ ազգեր իրարու պարտական են քաղաքակրթութեան և զարգացումի ասպարէզներու մէջ. անհատներ՝ եւս առաւել։ Դիոգինէս կոտիկը զարկաւ գետին փշրեց, երբ տեսաւ գիւղացի տղու մը ագրիւրէն ջուրտ ափով ջուր խմելը. կ'ըսեն թէ բժիշկ մը ճնճղուկէ ջուր խմելը. կ'ըսեն թէ բժիշկ մը ճնճղուկէ սորվեր է հիւանդին հօքնայ տալը։ Այսպէս մեծ ազգերու ճարտարապետներէն վրիպածը, հայ քարագործը գլուխ հաներ է։

Ծայրայեղ հայրենասէր չենք ուզեր ըլլալ, հակասութեան մէջ ինկնալու սոսիճանին, եթէ կլոր կերպով ժխտենք նաեւ մեր հարեւան կամ հեռաւոր ազգերու ազդեցութիւնը՝ Հայաստանի քաղաքակրթութեան և գեղեցիկ զարգացման վրայ։ Եւ մենք կը գտնենք զանազան

1. Տեսիլ I. 150 Հայաստան։ Մենք յետոյ պիտի բացատրենք գմբէթի և վեղարի բռնուածքը, ուր գլան չկայ. Տեսիլի ենթադրութիւնն է, ծանօթ չլինելով Հայ արուեստի հետ։

digitised by A.R.A.R.@

շրջաններ՝ յորմէ անցեր է Հայ երիտասարդութիւնը, որ մեր ազգի վերածնընդեան կերտողներն եղած են։ Մակեդոնական շրջանին անոնք կը փութային հելլենական գիտութեանց կեդրոնատեղիները, կը յաճախէին քերականական դպրոցներ, ճեմարանական մարզարաններ, և նոքա յաջողդաբար մինչեւ Ե դար եղան մեր գրականութեան ռահվիրաները, գրի մշակները։ Երկրորդ շրջան՝ մը կը սկսի երբ հռոմէական գերիշխանութիւնը կը հաստատուի Փոքր Ասիոյ և Միջագետքի վրայ. Հայաստան կռուախնձոր մ՚էր երկու հզօր տէրութեանց միջեւ Պարսից և Հռոմայեցւոց։ Հայաստան նժարի մէջտեղ կանգնած էր, ո՛ր կողմը հակէր, յաղթութիւնը անվրէպ այն կողմինն էր։ Ուստի թէ Պարսիկներն և թէ Հռոմէացին կ՚ուզէին մշակել Հայոց բարեկամութիւնը։ Առաջ յիշեցինք որ Հայերը կրօնական ըմբռնումով անհամակիր էին Պարսից, չնայած թագաւորական տուներու ազգակցութեան. ուստի հակամէտ ի բնէ արեւմտեան քաղաքակրթութեան, յօժարութեամբ յանձն առին հռոմէական գերիշխանութեան թեւարկել, հրապուրուած Օգոստոս կայսեր խաղաղասիրական քաղաքականութենէն։ Եւ իսկապէս Օգոստոս պէտք ունէր Հայոց բարեկամութեան, աւելի իր անձնական շահերուն համար, նա կը հետապնդէր նսեմացնել մանաւանդ Անտոնիոսի յիշատակը, որ խրոխտացեր էր Կրասոսի կորսընցուցած հռոմէական արծիւներ ետ խլել Պարթեւներէն, յոյս ունենալով վճռական յաղթութեան մը վրայ, որ միշտ իրրեւ սեւ ամպուէս փախաւ իր աչքի առջեւէն։ Օգոստոս հասկցաւ որ այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ (sine qua non) պէտք ունի Հայոց աջակցութեան. ուստի փոխանակ Անտոնիոսի գոռոզ և անարդար վարմունքին, ինքն իր բնական շողոքորթ քաղաքականութեամբ՝ ճանաչելով Հայոց հասցուցած անիրաւութիւնը, մանաւանդ Արտաւազդի դաւաճանութենէն ձերբակալութեան մէջ, որ և Օգոստոսի անձնական բարեկամ համարուած էր և անոր համար Անտոնիոս ամենայն գնով աշխատեցաւ և մեր քաջ թագաւորը ձերբակալեց։ Օգոստոս Ծերակոյտին հաւատացնելով որ Հայերը Հռոմի ժողովրդեան բարեկամ են, շատ մը բարիքներ կը խոստանար Ծերակոյտին այս բարեկամութենէն. այսինքն մեր Արտաշէս թագաւորը և Սմբատ Բագրատունին միջնորդելով Դարեհի մօտ, յաջողեցան վերադարձնել առ Օգոստոս Հռոմէական արծիւները և այս առիթ եղաւ Օգոստոսի՝ Պարսից հետ խաղաղութեան դաշն կապելու։ Օգոստոս բարձրացաւ Հռոմի ժողովրդեան աչքին և ճիշդ յաղթանակաւ զարձաւ յաւիտենական քաղաքը։ Կայսրը իր անձնական բարեկամութեան շնորհիւ, համոզեր էր Հայ ազնուականութիւնը որ իրենց զաւակները այսուհետեւ Հռոմ ուղարկեն դաստիարակուելու, ուստի Հայ երիտասարդութիւնն սկսաւ Ամենքէն անցնիլ Հռոմի վարժարանները։ Հայերու անունը Հռոմի մէջ ծանօթ էր Օգոստոսի երիտասարդութեան ժամանակ։ Ոչ միայն իրրեւ զինուորական ազգ, այլ նաեւ ուսմանց մշակող, շնորհիւ Տիրան գրապետին և քերականութեան վարժապետին։ Տիրան Հայ, ծնած էր Փոքր Հայք, աշակերտած էր Դիոնեսիոս Թրակացւոյն Հռոդոսի մէջ. Լուկուլլոսի գերիներուն հետ տարուեցաւ Հռոմ, ուր ձեռնարկեց և շինեց մատենադարան և Սուիդաս կը վկայէ որ 30 հազար հատոր հաւաքեց, մինչ այլք աւելի հաւանօրէն երեք հազար կ՚ընեն գումարը։ Տիրանի շնորհիւ, կ՚ըսեն, ազատեցան կորստենէ Արիստոտէլի քաղաքական գրուածները. բայց Տիրանի փառքը կը կազմէ Կիկերոնի գրամատենակարգաւորելը, որու համար մեծ Հռոմայեցին միշտ շնորհապարտ եղաւ, և կ՚ըսէր՝ Տունս կարծես թէ միայն մը աւելցուց, քաջ գրագէտ էր Տիրան, և Կիկերոն իր տան մէջ վարժարան հաստատեց ուր քերականութիւն կը սորվեցնէր հռոմայեցի տղայոց։ Ո՞վ գիտէ թէ Օգոստոս յաճախած չըլլայ Տիրանի վարժարանը, և ստիպած է որ սէր մը կապեր էր Հայոց հետ և միշտ զՀայերը և զԱրտաւազդ կը պաշտպանէր Ծերակոյտին առջեւ։ Անտոնիոսի գրրած զրպարտութեանց և ամբաստանութեանց դէմ։ Կայսեր և Ծերակոյտին նպատակն եղած է Հայ երիտասարդութիւնը, որոնք առաւելապէս նախարարներու որդիքն էին, կրթուէին և վարժէին հռոմէական բարոյից և սովորութեանց մէջ, անոնցմէ կազմել հաստատուն բարեկամներ և դաշնակիցներ Հռոմի ժողովրդին, ուծացնելով պարսիկներէն և կորելով անոնց յարաբերութիւնները նաև Արշակունի տան հետ։

Համառօտասէր և բարձրամիտ Տակիտոս, համ առնելով կ՚երկարէ խօսքը հայ ազնուական երիտասարդութեան մասին, որոնք Հռոմ կրթուած են. ոչ մի բանի վրայ չզարմացող լատինը, դիտել կու տայ հայ կարիճներու զգուշաւոր և համեստ կենցաղավարութիւնը այնպիսի մեծ և բարքերով ապականած քաղաքի մէջ։ Իրենց գնացքի և քաղաքավարութեան ցոյցերու մէջ շատ մեծ ծանրութիւն և լրջութիւն կը պահէին, բնական և վայել արեւելեան նկարագրին։ Պատիւ այն ժամանակի երիտասարդութեան և խրախոյս մեր ժամանակի մէջ ապրողներուն, հետեւելու անոնց օրինակին թէ՝ «Լոյսի քաղաքի» մէջ և թէ ի սփիւռս ուր ցրուած են։ Բայց միւս կողմանէ կը գանգատի նոյն մատենագիրը, որ հռոմէական ուսումն ապարդիւն կը մնայ, երբ կը վերադառնան իրենց հայրենիքը։ Արդարեւ հռոմէական շրջանին, բաց ի Գառնիի Տրդատայ սարաւոյթէն, (եթէ կան ուրիշներ ալ մեր մեծ քաղաքներու աւերակներու մէջ թաղուած) մեր երիտասարդութիւնն գեղարուեստի նորութիւն մը բերած չէ Հայաստան։ Եթէ պեղումներ ալ լինին Հայաստանի մէջ, տիրող ճարտարապետութիւնը յունական և փռիւգականն է։ Վասն զի խկն որ ըսենք, Հռոմ ինքնուրոյն ճարտարապետութիւն ունեցած չէ։ Ասիոյ և Եգիպտոսի տիրելէն վերջ, Կայսերք օրինակ վերցնելով, մեծդի շէնքեր կառուցանել ձեռնարկեցին Հռոմի մէջ և մեծադոյնները կերտեցին, ինչպէս Ներոնի Ոսկի տունն և Կոլոսէոնը, բայց միշտ յոյն ճարտարապետներու առաջնորդութեամբ։ Հռոմէական ճարտարապետութեան և արձանագործութեան ոսկեդարը կը հաշուեն Տրայիանոսի ժամանակը, (Ք. Բ. դ.) յորում Ցոյն–Հռոմէական արուեստն ամենընդրութեամբ կը մրցէր Ատտիկեանին հետ, սակայն յոյն արուեստաւորներն էին գործաւորները. Տրայիանոսի հրաշալի Հրապարակը (Forum) Տաճարը և զրաստունն և սիւնը շինողն էր Ապողոդորոս Դամասկացին, որ նոյնպէս առաջին անգամ Դանուբի վրայ քարէ կամուրջ մը շինեց Տրայիանոսի հրամանով, հակայաբերձ քսան կամարներու վրայ, որու երկարութիւն աւելի էր քան մի մղոն։ Եւ սակայն այդ զարմանալի հանճարը, Ադրիանոս կայսեր սոսկ նախանձին զոհ գնաց։ Իսկ հայ երիտասարդութիւնը որ Օգոստոսի ժամանակէն մինչեւ Կղոդիոս, առաջին դարու կէսերուն կը յաճախէր Հռոմ, ջանք մը ըրած չեն իւրացնել օտար արուեստ մը, զայն պատուաստելու իրենց ունեցած աւանդականին վրայ։ Ձեն սիրած նաեւ կեանքի դիւրութիւնները, թատրոնական համախմբութիւնները, մանաւանդ հոյակապ բաղանիքներու կենցաղասէր և մարզական հաստատութիւնները, ամենահամեստ չափերով անգամ։ Ընդհակառակն Տակիտոսի խօսքերէն կրնանք զուշակել որ մեծ քաղաքի կրկէսներու մէջ առաւել կը զբաղէին «այն ամէն բանով որ մարմնական պարծանք» կը յաւելուին. զինուորական կեանքը, ձիավարել, զէնք շարժել յաջողակի. ինչպէս Տիրիթ Նէապոլսի թատրոնի մէջ՝ իր մատանց ճարտարութիւնը և պարթեւական կորովը՝ ցոյց տալու համար Ներոնի և Պարթենոպէի հանդիսամար Ներոնի և Պարթենոպէի հանդիսամար Ներոնի և Պարթենոպէի հանդիսամ



Հին հեթանոսական քանդակ փռիւգական խոյրով ի Պայազիտ

Դարոյնք (Պայազիտ) Հայկազեանց մէկ ցեղին կը պատկանէր ի հնումն, յեռոյ Արտաշէս Բ տուաւ այրաքաջ Սմբատին, ուր բերաւ Բագարանէն բնակեցուց Երուազի ծառաները, այսինքն քուրմերը, որոնք դուցէ քանդակած և կանգնած են բազմոնս. յորմէ կ'երևին քրմական զգեստը և խոյրը, որ փռիւգականը կը յիշեցնէն. Ցառաջընթացն երիտասարդ է տակաւին անմօրուս, արդեօք Վանանդ է վիշապաքաղ, լաթոր ձեռքին, և գողթան երգերու մէջ դեռ մանուկ կը կոչուի. իսկ յետնորդն ծերունին է Մանիտան աղօթաւոր և զոհաբերող. (Աստուած և Երկրոյ ?).

ներ կարդայ Միհրդատին, ընտրուած Հայոց թագաւորին, և բարոյախօսէ Հռոմի օրէնքներու և արդարութեան գերազանցութեան մասին, նա և ընկերներն դառնալով Հայաստան, պիտի մոռնան Հռոմ և իր վայելչութիւնները, և պիտի սիրեն իրենց նախկին չարքաշ կեանքը, գիւղական, անտառային, երբ «զօրէն ազատ երէց շրջէին ի մէջ ծաղկաբեր լեռանց» և Վարաժ պատանիներ կը հրահանգէին ըլլալ «նշաւակ ի նետաձգութիւն կորովութեան»[1] որսորդութեան արշաւանքներու մէջ։ Մեծ պատիւ և պարծանք էր «ընդարձակաւուն ձիւնեղէն լերանց» բնակիչներուն, որպէս ժամանակ արշ մը, կինճ մը սպաննելը, քան թէ մտաբերել Աթէնքի Պատկերասարահը, կամ Հռոմի աշխարհամուտ Հրապարակի ակնախտիղ տեսարաններուն հանդիսատես բազմիլ։ Այսպէս երբեմի «անկախ և ազատ» Հայաստանի ազատազգի բնակիչներու «առ ի յիմասան աղամարութիւն (տիմարութիւն) և անկատարութիւն ոգւոյն բանականի» յայտնի եղաւ, զոր Խորենացիէն առաջ Տակիտոս իր Տարեգրութեանց մէջ շեշտած էր։ Գոնէ Հռոմայեցիներէն սորվէին մարդ և աշխարհ կառավարելու արուեստը, այն ատեն Կղօդիոսի յորդորներն առ Միհրդատ արդիւնաւոր պտուղ ցոյց տուած կ'ըլլային. ամէն ժամանակ

1. Նետաձգութեան մէջ քաջ նշան առնող։

վտանգի սպառնալիքի առջեւ ամրապնդելու ազգային միութիւնն և հայրենիքի սահմաններու ապահովութիւնը։ Աւա՜ղ և շատ աւա՜ղ։ Ուստի կարելի է եզրափակել որ հայ երիտասարդութիւնը ոչ գեղարուեստի և ոչ քաղաքականութեան մէջ օգտուեցաւ Արեւմուտքէն, և մեզ կը թեայ զբաղիլ Արեւելքով, ուր Հայ ազգը այլ և այլ քաղաքակրթութեանց շրջաններէն անցնելով, մշակեց ինքնուրոյն զարգացում, մշակեց և պահեց իր բնիկ ազգային յղացումն և արուեստի տիպարը։

ԼԲ. Գեղարուեստի ճաշակը զարգացուցին Հայ Արշակունի թագաւորները, երբ գնելով կամ կողոպտելով Փոքր Ասիոյ գաւառներն, բերին յունական դպրոցի գեղեցկագոյն պղնձաձոյլ արձանները և ճոխացուցին իրենց Հայաստանի գլխաւոր մեհեանները։ Կը սիրենք յուսալ թէ աշխարհաժողով ազներու ատեն, խելացի և մեծահանճար երիտասարդութեան ուշադրութենէն չէին վրիպեր այն պղնձէ պատկերներու արտաքոյ կարգի գեղեցկութիւնը և արտայայտութիւնը զոր Լիսիպպոսի, Կեփիսոդոտոսի և Պրաքսիտեղէսի պէս քաջ վարպետներ դրոշմեր էին քարի և մեռոտի վրայ։ Եւ մանաւանդ շաղակրատ փստածայրիկ լեզուով յոյն քուրմերը, զորս Տիգրան մեծն արձաններու հետ բռնի բերած էր, հանդիսաւոր օրերուն չէին հիւսեր թէ շինողներու և թէ զրօշաձներու ներբողը, յիշատակելով հեղինակներու անունները, տեղը, փոխադրութեան ժամանակը, որո՛ւն ձեռքով և թէ ի՛նչ արժէք ունին այդ գլուխ գործոցները՝ գեղարուեստի տեսակէտով։ Այս և ասոր նման պատմուածքներ ուխտաւորներու ներկայութեան, լաւ տպաւորութիւն ըրած են զգածուող երիտասարդութեան վրայ, որոնցմէ ոչ սակաւ յորդորուած են գնալու այդ ձեռագործերու երկիրը, շփուիլ այն ժողովուրդի հետ որ տուած է այնպիսի հմայաւոր և կատարեալ արուեստով վարպետներ։ Եթէ Հայոց մէջ արձանագործութեան արուեստը չծաղկեցաւ, պատճառ իր կրօնքն էր, որ ամէն նիւթական պատկերէ կը խորշէր, և միայն բնութիւնը կը պաշտէր։ Այնուհանդերձ կը համարիմ հայ արձանագործի մը աշխատութիւն այս «Հին հեթանոսական քանդակը, փռիւգացի գտակով». Հ. Ղ. Ա. Այրարատ էջ 550։

Արտաշէսի և Տիգրանի բերած արձանները տասն էին, եթէ ոչ աւելի, մեծերու հետ փոքրեր ալ, ոսկեղէն և արծաթեղէն, որոնք մաշեցան, կորան։ Թէպէտ եօթը մեհենատեղիք կը յիշուին, սակայն պէտք է յիշել որ Տարօնի Աշտիշատի մեհենի երեք խորանի մէջ՝ մի մի արձան կար. Այրարատեան աշխարհի Արտաշատ քաղաքին և Երազամոյն ճանապարհի վրայ. Բարձր Հայոց Դարանաղի գաւառի մէջ՝ Կամախ կամ Անի և Թորդան. Եկեղեցեաց գաւառի մէջ՝ Երէգն գիւղը և Թիլ աւանը, Դերջանի Բագայառիճ գիւղը։ Այս տասը արձաններէն հաւանօրէն միայն Թիլ աւանի մօտերը գտնուեցան Նանէական Անահիտի պղնձէ արձանի երեք կտորները 1883 թ. որոնց մասին կ'արժէ մանրամասնարար խօսիլ, վասն զի Հայաստանի սիրելի աստուածուհւոյն դէմքն է, որ պատճառ եղաւ Հայաստանի լուսաւորութեան։

Հայաստանի մէջ Ս. Գրիգորի ժամանակ կային երեք Անահտական մեհեաններ, առաջինը Արտաշատի մէջ՝ պատահաբար. վասն զի Արտաշէս Ա. Խլած և իր որդւոյն ձեռքով բերուած պղնձաձոյլ արձանները, Տիգրան զետեղել տուաւ իր ժամանակ զանազան քաղաքներու մէջ. բայց յետոյ Երուանդ արշակունին՝ անոնցմէ շատերը փոխադրեց Բագարան իր ձեռական Երուանդակերտի մօտ. ուսկից յետոյ Արտաշէս Բ. ձեռքով կրկին վերադարձան՝ ոչ ամէնքն իրենց տեղերը, այլ Արտաշէսի կարգադրութեամբ կանգնուեցան այն տեղերուն մէջ, ուր որ Տրդատ և Գրիգոր կործանելու կ'ելլէն, ըստ որում կը նկարագրէ Ագաթանգեղոս. բայց Խորենացին ալ աչքի առաջ ունենալու է, վասն զի երկու հեղինակները միաբան կը լրացնեն. Ագաթանգեղոս տեղերու ճշգրտութեամբը աւելի,

digitised by A.R.A.R.@

իսկ Խորենացի տալով արձաններուն յունական անունները, որով կարելի պիտի ըլլայ փոքր ի շատէ ճշդել երեք Անահիտներու անձնաւորութիւնն Հայ դիցաբանական պարու մէջ. վասն զի Յոյներն և Հռոմայեցիք կը զանազանէին կոչումով երեք Անահիտներ. Ափրոդիտէ, Արտեմիս և Աթենաս. — Այդ երեք դիցուհիներն, անշնորհքն և շնորհալին, մտան բազմեցան Հայոց մեհեաններուն մէջ։

Անշնորհք Անահիտն՝ որ է Աստղիկ, համապատասխան յոյն Ափրոդիտէի և լատին Վենուսի, ասոր պաշտամունքն Յաշտից տեղիքն էին, իբրեւ տարփաւոր Վահագնի (Հերակլէս)։ Հայերն Աստղկան մասին լաւ գաղափար կազմած են, իբրեւ քոյր Սեմայ և դուստր Նոյի։ Խորենացւոյն պատմածը ճշմարտութեան կերպարանք ունի, վասն զի Անահիտի դիցաբանական գաղափարը եւրոպացի գիտնականները Սեմական կը համարին և Արեւելքէն անցեր է Արեւմուտք. բուն արմատը գուցէ փընտռուի Ս. Գրոց Ադամի և Եւայի պատմութեան մէջ, Տիպար այրական և իգական սեռի, մին Ապողոն, միւսն Աստղիկ կամ Անահիտ։ Ապողոն կրկին պաշտամունք ունէր, մին իբրեւ արեւի աստուած, և միւսն աւելի բարոյական իմաստով զգաստութիւն։ Մեր Վահագնի դիցաբանութեան մէջ պէտք է զինքը համարինք իբր Արամազդի որդի և եղբայր Արտեմիսի։ Յունական Արտեմիսն աւելի վեհ կերպարանք և ողջախոհ կին մը համարուած է և մրցութեանց քաջալերիչ եւս իբր հարատաբ որսորդի պատկերով հասած է մեզի հիներէն։ Իմաստուն և խաղաղարար դերի մէջ երեւցած է, որով համապատասխան Նոյի դուստր Հայաստանի Աստղկան, և կոյս մնացած, որով զգաստութեան մարմնացումն։ Ուստի Խորենացին, որ զՎահագն կը համեմատէ Հերակլի եւ Ափրոդիտէ (իմա Արտեմիսն) տարփաւոր կը կոչէ, չի համապատասխաներ Հայ Աստղկան մաքուր գաղափարին։ Թերեւս Յունաստանէն բերուածը Ափրոդիտէ կոչուած դիցուհւոյն պատկերն եղած է, բայց Հայ թագաւորն անշուշտ Աստղիկ կնքեր է յատուկ հայկական գաղափարի դիցուհի մը և կանգնել տուած է իր եղբօր կողքին որ Վահագնի տեղ կրնար և Մանիտոն կոչուիլ։ Բայց այս Անահիտը նշանաւոր եղած չէ Հայ պատմութեան մէջ։

Առանց Ագաթանգեղոսի պատմութեան գրեթէ կամ հազիւ հազ իմանալինք Անահտայ ձօնուած կրօնական մեծ պաշտամունքը, և առանց Գրիգորի վկայութեան պիտի չգրուէին Տրդատի դաւանած մեծ համարումն ու համակրութիւնը դէպ ի Տիկինն Անահիտ, պաշտպան և կեցուցիչ Հայաստանի։ Մենք ալ կը կոչենք զինքը « կեցուցիչ », բայց չենք գիտեր թէ ինչ բանի մէջ և ե՞րբ փրկեր է Հայաստանը Հռոմէական կայսերաց ընչաքաղցութենէն, որոնք չաստուածոց արձաններն անգամ կողոպտեցին Փոքր Հայոց տաճարներէն և տարին և դեռ ալ կը տանին։ Այնուհանդերձ պիտի համակամինք Տրդատայ նկարագրութեան հետ, և աշխատինք թէ երեք Անահիտներէն որ արժանացաւ թագաւորին գովեստներուն։

Հ. Ալիշան իր յիշեալ «Հին Հաւատք» երկասիրութեան մէջ նախապատուութիւնը կու տայ Երիզայի Անահիտին, ինչպէս նաեւ Զամչեան պատմահայրն։ Թոյլ կու տամ ինձ նկատելու, որ գուցէ վրիպած լինի երկու մեծերու արգասեան աչքերէն, ուր Ագաթանգեղոսի պատմութեան թելը, որով Երէց գիւղը իբր ասպնջական կ'ըլլայ այն Անահիտին (Արտեմիդայ) զոր Տրդատ մեծամեծ գովեստներով կը գովաբանուատէ, և որուն կը տիպէ զԳրիգոր ծաղիկներ և յաղթանակի պսակ մատուցանել։ Մինչ եթէ միտ դրուի պատմութեան, Տրդատի հանդիսաղրութիւններն և Գրիգորի ըմբոստացումն արքայական հրամանին ու չարչարանքները տեղի ունեցած են Թիլ աւանին մէջ, ուր կուսանն Անահիտի (Աթենասն Յունաց) մեհեանն էր՝ Խնդիրը պայծառ հասկնալու համար կը դնեմ նոյնութեամբ՝ Ագաթանգեղոսի պատմածը։

« Ե. Յառաջին ամին Տրդատայ արքայութեանն Հայոց մեծաց, խաղացին եկին հասին յԵկեղեաց գաւառ, ի գիւղն Երիզայ, ի մեհեանն Անահտական, զի անդ զոհս մատուցցեն. և իբրեւ կատարեցին զգործն անարժանութեան, իշին բանակեցան առ ափն գետոյն, զոր Գայլն կոչեն » չ'ըսեր թէ անցան գետին միւս ափն։

« Իբրեւ եկն եմուտ ի խորան անդր և յընթրիս բազմեցաւ, և իբրեւ ընդ գինիս մտին, հրաման ետ թագաւորն Գրիգորի զի պսակս և թաւ ոստս ծառոց՝ նուէրս տարցի բազնին Անահտական պատկերին։ Այլ նա ոչ առնոյր յանձն պաշտօնարար լինել դիցն երկրպագութեան »[1]։

Դիտելի է նախ որ Երիզայի մէջ կեր ու խում ընելէ վերջ՝ « իշին և բանակեցան առ ափն գետոյն՝ զոր Գայլն կոչեն »։ Անշուշտ գետեզերքը բաց դաշտի մէջ չբանակեցան — այստեղ չէ յիշուած այն աւանը որ թագաւորական սեփականութիւն էր, ուր էր խորանն արքունի, այսինքն բնակարանը։ Արդ այս տարակոյսը կը լուծուի հեշտութեամբ եթէ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ 45 էջէն՝ անցինք ԴԱՐՁ ՓՐԿՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՐՀԻՍ ՀԱՅԱՍՏԱՆ էջ 586–87։ Հոն նկարագրուած է մի առ մի հեթանոսական մեհեաններու գրաւումն և կուռքերու ու բագիններու կործանումը։ Այսպէս անոնք կը հանին Կամախու գաւառն և հոն կը կործանեն Արամազդի արձանը. « Հօրն անուանեալ դիցն ամենայնի »։ Անկից կու գան սահմանակից գաւառն Եկեղեաց, որ համբաւաւոր Անահիտի նուիրուած երկու մեհեաններուն համար կոչուած է նաեւ Անահտականաց գաւառ։ Ճանապարհին կը հանդիպին նախ Երէզն աւանի մեհեանին, նուիրուած Արտեմիսի, հոն « փշրէին զոսկի պատկերն Անահտականաց դիցն »։

Ինչ որ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ մէջ, էջ 45, պակաս թողած էր, հոս կը լրացնէ, ըսելով որ Երէզ աւանին մէջ կռապաշտական տեղերու մաքրութեան գործը կատարելէն յետոյ, պարզապէս չ'ըսեր « իշին

Փիդիասի Լեմնայի Աթենաս
(Տրեզդայի Ալբերինոյ թանգարանին մէջ)

բանակեցան առ ափն գետոյն զոր Գայլն կոչեն », այլ կը զանազանէ ըսելով. « Եւ անտի ընդ գետն Գայլ յայնկոյս անցանէին, քանզի ՔԱՆԴԻԻՆ ԶՆԱՆԷԱԿԱՆ ՄԵՀԵԱՆՆ ԴՍՏԵՐՆ ԱՐԱՄԱԶԴԱՅ Ի ԹԻԼՆ ՅԱՒԱՆԻ », էջ 587։

Մեզի շատ կարեւոր է աշխարհագրական այս մանրամասնութիւնը, մօտաւո-

1. Ագաթ. պատ. 1835, էջ 45.

digitised by A.R.A.R.@

Փիդիասի կոյս օրիորդ Ա.թենասը

(Ա.թենքի Ազգային թանգարանին մէջ) Ընդօրինակութիւն սկզբնագործին՝ որուն բարձրութիւնը կը հասնէր 11 չափի. փայտէ շինուած էր, բայց ազուցուած ոսկիով և փղոսկրով։

բապէս ճշտելու համար Անահտայ արձանին զտնուած տեղը։

Անահիտներու մէջ յարգին՝ Արամազդայ դուստրն է, Ա.թենասը։ Ասոր ծնընդեան նկատմամբ այլեւայլ են հիներու կարծիքը, որուն ծագումն արիական է, ամենապայծառ և թափանցիկ նիւթէ մը, որ լոյս կը սփռէ համագոյից մէջ. իսկ Յոյները կ'ըսեն թէ ծներ է Արամազդի ուղեղէն. այնպէս որ անոր ներկայութեանը Ոլիմպոս կը խաղայ հիացմամբ. երկիրս ուրախութեան ձայներ կ'արձակէ, իսկ ծովն ի խորոց կը շարժի։ Փիլիսոփաներէն ոմանք կ'ըսէին թէ Արամազդի իմաստութեան զօրութիւնն է, որ յանձին Ա.թենասի կը մարմնացնէ գերազոյն բանը, լուսոյ յայտնութիւնը, որ երկնքի բարձրութիւններէն կը ծաւալի երկրի վրայ։ Բոլոր այլաբանական անունները, որոնք մտած են զիցաբանութեան մէջ՝ Հոմերոս և Հեսիոդոս՝ Ա.թենաս անունով զրոշմեր են։ Ա.թենաս՝ երկրագործութեան, խաղաղութեան աստուածուհի մ'էր, որուն Ա.թենացիք ձիթենին նուիրած էին. պատերազմի մէջ քաջութիւն ներշնչող Պալլասը, ուստի ձեռքը նիզակ կու տային և ասպար մը. հանճարեղ խորհրդական ամէն քաղաքական և ընկերական գործառնութեանց ժամանակ, և ամբողջ աշխարհի քաղաքակրթութեան բարգաւաճման խորհրդական խրախուսիչ։ Իմաստասէր թէ բանաստեղծ գրեցին և սքանչացուցին անոր իմաստութիւնը, զգաստութիւնն ու պարկեշտ կուսութիւնը. խնամակալ ու պաշտպան իշխանութեան և պետութեան։ Հիներն երկիւղածութեամբ և համակրութեամբ կը յիշէին Արամազդի լուսածդի դստեր անունը։

Եթէ կարելի ըլլար Ա.թենասի վերաբերեալ հին հեթանոսական զաղափարները համեմատութեան դնել Սողոմոնի Առակաց զրքին մէջ իմաստութեան մասին զրածին հետ, զոգցես նմանութիւնը շատ խոտելի չըլլայ։ Իմաստունն Աստուծոյ բանին կամ իմաստութեան կ'ընծայէ արարչագործութեան հրաշալիքը. «ի ժամանակի յորում հաստատուն դնէր զհիմունս երկրի, ես էի առ Նովաւ պատշաճեալ». վասն զի, «ի սկզբանէ յառաջ քան զերկիր առնել... ծնաւ զիս Տէր»[1]։ Աստուծոյ հշմարտութիւնները, ուրիշ տեղ ըսինք, ինքը յայտնած էր մարդկան, բայց անոնք «ն

լիքներուն, և Տրդատ տարած յաղթութիւններուն զօրավիգ և պահապան կարծելով Անահիտ Աթենասը, բազմածախս զոհերով կ'ուզէ պատուել դիցուհին։

Այստեղ խօսքը կու տամ Հ. Ալիշանի. «Թէ ինչ համարմունք ունէին Հայք այսոր վրայ (Աթենասի, ո՛չ Արտեմիսի) լաւ բացատրէ Տրդատայ ըսածն (ըստ Ագաթ.) առ Լուսաւորիչն մեր. «Եթէ ոչ

Աչ երես

Զախ երես

Անահիտի պղնձէ գլուխը

յանձն առնուցուս դիցն պաշտօն մատուցանել, մանաւանդ այս մեծի Անահտայ տիկնոջ որ է փառք ազգիս մերոյ և կեցուցիչ, զոր թագաւորք ամենայն պատուեն, մանաւանդ թագաւորն Յունաց? որ է մայրն ամենայն զգաստութեանց, բարերար ամենայն մարդկան բնութեան, և ծնողն է մեծին Արին Արամազդայ... Մեծն Անահիտ՝ որով կեայ և զկենդանութիւն կրէ երկիրս Հայոց»։ Հրովարտակաւն այլ յետ լիութեան Արամազդայ մաղթէր Հայոց «խնամակալութիւն յԱնահտայ տիկնոջէ»։ Ուրեմն փոխանակ կնոջ Արամազդայ՝ այս ԴՈՒՍՏՐՆ[1] մեծ դիցուհին և Տիկին Անահիտն, իբր տիրուհի և մայր Հայոց՝ Արամազդայ ուղեղէն ծագած է և կոյս մնացած։ Բայց արդեօք այսպէս կարծէին ամենայն Հայք, թէ կնութեան կարծիք այլ ունէին, ինչպէս և քրիստոնեայ գրիչք Յաստաւուրաց՝ փոխանակ տիկնոջ գրեն. «իգական պատկերն Անահտայ՝ կրնոչն Արամազդայ»[2]. սակայն Տրդատ միայն ԴՈՒՍՏՐ Արամազդայ կու ճանչնայ զնա, և բարոյական «Մայր՝ ամենայն զգաստութեանց», Արտեմիսայ և ԱԹԵՆԱՍԱՅ Յունաց, միանգամայն հաւասարեալ՝ կուսութեամբ»[3]։

Այսպէս ուրեմն քրիստոնեայ Տրդատն և Գրիգոր, Գայլ գետի միւս ափին գտնկար արքունի Թիլ աւանին մէջ, փոխանակ պսակի և ծառերու թաւ ոստերի նուիրելու Անահտայ պատկերին՝ մուրճի և կացինի հարուածներու տակ փշրեցին «զոսկի պատկերս Անահտակայնաց դիցն», յիշելով զերկուսն ի միասին Արտեմիդեայն որ յԵրէզն, և Աթենասայն որ ի Թիլ աւաններում։

1. Ընդգծումը մերն է։
2. Ունիթորաց է կարծիքս։
3. Հ. Ալիշան, «Հին Հաւատք Հայոց», 1910, էջ 279–80։

Վերեւ ըսի որ Տրդատ Թիլ աւանին մէջ սկսաւ Ս. Գրիգորի դատը և չարչարանքը ու վճիռ տուաւ զանի Արտաշատու խոր վիրապը ձգելու։ Եւ իբր հաւանական փաստ կը յաւելում որ յետոյ Տրդատ փափկանկատութեամբ այդ աւանը պարգեւեց Արիստակէսի՝ առանձին բնակութեան համար, ուստի խոստովանողական մահուանէն յետոյ, կ'ըսէ Բուզանդ (Բ. գլ.) «տարան զնա և թաղեցին ի Թիլն աւանի, ի կալուածս Գրիգորի հօրն իւրոյ»։ Բուզանդ խառն ի խուռն կ'ըսէ «ի կալուածս Գրիգ. հօրն իւրոյ» որովհետեւ ամբողջ Եկեղեաց զաւառը Տրդատ պարգեւեց Գրիգորի կամ Եկեղեցւոյ, և արգելք չէ որ առանձին առանձին գիւղեր մէկին կամ միւսին պարգեւէր. Գրիգորի սեփականը Թորդանն էր Դարանաղեաց զաւառին մէջ, Արիստակէսինը՝ Եկեղեաց, իսկ Ս. Սահակինը՝ իր բուն գիւղը՝ Աշտիշատ Տարօնի մէջ։

Լգ. Այժմ զառնալով Անահտայ արձանին կամ պատկերին ինքնութեան՝ անոր գտնուած տեղին, արձանին և արձանագործին մասին ցանկացողները կրնան ընդարձակ տեղեկութիւններ գտնել «Բազմավէպ»ի մէջ, Հտ. ԽԱ. 1883։ Հոն քննադատողները Պրաքսիտեղէսի վերագրած են, որովհետեւ մագերուն սանրուած ձեւին մէջ նմանութիւն գտած են անոր Կնիդեան Աստղիկի մագերու յարդարումին հետ։ Պատմութիւնը կը յիշէ թէ կով կղզւոյն բնակիչները Պրաքսիտեղէսէն խնդրեցին իրենց Աստղկան արձանը կոփել. անիկա փոխանակ մէկի՝ երկու արձան շինեց, մէկը խլատեռ ձգած վրան, իսկ միւսը մերկ՝ բայց շատ աւելի գեղեցիկ։ Կովացիք զգեստաւորածն ընտրեցին, իսկ Կնիդացիք նազելի մերկ արձանն առնելով ուրախութեամբ իրենց քաղաքը տարին, որ և եղաւ պարծանք Կնիդայ, ուր հեռաւոր տեղերէ կու գային զայն տեսնելու, որովհետեւ արձանագործին գլուխ գործոցն համարուած էր։

Պրաքսիտեղէս գրեթէ միշտ մարմարիոնի վրայ աշխատեր է։

Արդ նկատի առնելով որ Կովացւոց համար շինած երկու արձանները մարմարեայ էին, դժուար է մեր ունեցած պղնձէ արձանը համեմատութեան դնել Կնիդացւոց մարմարեայ Աստղիկին հետ։ Եւ պիտի տեսնենք որ պղնձէ Անահիտը շատ կը տարբերի մարմարեայ Աստղիկէն։

Միտ դնելով յունական արձաններուն որոնք Աթենասը կը պատկերեն, մերինին մերձաւորագոյն թուեցաւ Պրաքսիտեղէսի հօր Կեփիսոդոտոսի ձեռագործ՝ Հաշտութեան Պղուտոն մանուկը բազկին վրայ թեան Պղուտոն մանուկը բազկին վրայ բռնած՝ պղնձէ արձանը, զոր Աթենացիք զայն իրենց Հասարակաց հրապարակին վրայ կանգնեցին։ Փիդիասէն վերջ ամենամեծ արձանագործն էր, և կը պատկանէր այն շրջանին, երբ յոյն արձանագործները հրաժարելով գաղափարականէն՝ աւելի բնութիւնը օրինակելու հետեւեցան, որովհետեւ արուեստաւորն իր հոգեբանական զգացումները կրնար դրոշմել քարի, պղնձի վրայ. Կեփիսոդոտոս առաջինը կը հանդիսանայ «նոր քաղդր ոճիւ» յունական արուեստին, որուն կը վկայէ իր Աթենասի՝ Հաշտութեան արձանը, որուն հետ համեմատութեան պիտի դնենք մեր Անահիտը։ Նախ համեմատութեան երկու խօսք անոնց՝ որոնք մեր Անահտայ գլուխն ու ձեռքերը համեմատեցին Կնիդեան արու ձեռքերը համեմատեցին Կնիդեան ար-



Անահիտի ձեռքերը

digitised by A.R.A.R.@

Հաշտութեան և Պղուտոնի խմբարձան

Գործ՝ Կեփիսոդոտոսի որ Պրաքսիտեղէսի հայրն և վարժապետն էր. մեծազոյն արուեստագէտ Փիդիասէն յետոյ, որ դարազլուխ կազմեց իր «Նոր քաղաքի արուեստով», հետեւելով իր հօր՝

ձանին գլխուն և ձեռքերուն հետ։ «Բազմավէպ»ի յօդուածագիրը կը ճգնի ցոյց տալ Պրաքսիտեղէսի կամ անոր զարոցին գործը։ Ձեռքերու բաղդատութեան մէջ, իբրեւ ապացոյց կ՝անդրադարձնէ որ մէկը Կնիդեայ արձանին նման սփածանելի մէկ ծայրն ամփոփեր է ձեռքին մէջ, իսկ միւսովն ամօթոյքը կը ծածկէ։ Ատիկա այնքան բնական բան է որ կը տեսնուի հիներու զանազան Աստղիկներու վրայ, որոնք մերկ պատկերացուած են։ Ծամերու յարդարուածքը այնքան ճիշտ չէ, վասն զի ծալքերը աւելի փափուկ և ոլորուն են, ինչ որ չի տեսնուիր Կնիդեան մարմարի վրայ, որով ասոր գլուխը կլորկեկ կը տեսնուի։ Մեր պղնձէ Անահիտի երեսն անուշ ժպիտ մ՝ունի, որ կարծես դիմացը մէկն ըլլար. մինչ Կնիդեանն աւելի հեռու կը նայի, ամենապարզութիւն մը կը փայլի երեսին վրայ, անայլայլ և անմեղուկ, որով ինքզինքը միայնութեան մէջ, հեռի օտար աչքերէ կը նկատէ։ Բայց այսքանը բաւական չէ ճշտելու արուեստաւորը և արձանագործին անձնաւորութիւնը։

Անահիտի գլուխը կը պատկանի անտարակոյս Փիդիասէն յետոյ եկող համբաւաւոր արուեստագէտներէն մէկուն, երբ դաղափարականը տեղիք տուած էր իրական, բնութեան նմանութեան, բնութիւնն ինքնին կաղապարելու։ Բնութիւնը պատկերող արձանագործներէն մէկը անհասանելին Պրաքսիտեղէսն է եւ կը կրորդը Սկոպաս եւն. քան զսոսա կանխէ Պրաքսիտեղէսի հայրը Կեփիսոդոտոս, որ Փիդիասէն վերջ երկրորդ մեծ արուեստաւորն էր։ Համեմատութեան եզր փորձենք առնուլ Կեփիսոդոտոսի Հաշտութեան պղնձէ արձանը, զոր Աթենացիք կանգնեցին հասարակաց հրապարակին

վրայ։ Հաշտութեան արձանը մեծ տիկնոջ մը կերպարանքն ունի, յորում նկարուած է մեծահոգութիւն, կշռադատութիւն, մեծագոյն պարզութիւն, անբացատրելի գոհունակութիւն, հապա հոգեկան զգացումը։ Հաշտութեան գլուխը մայրական քաղցրութեամբ ծռած է դէպ ի Պղուտոն, մանուկը բազկին վրայ բռնած, որ մանկական ժպիտով մէկ թեւը երկնցուցեր է դէպ ի դիցուհւոյ ծնօտը՝ սիրաշոշափ թաթիկով, միւսով բռնած է ամաղթեղջիւր Լուութեան և յաղթութեան բերող. նայուածքներն իրարու կը հանդիպին աղուական անհուն գորովով, որ յատուկ է մայրական և մանկական բնութեան և ոչ երեւակայական։ Այն քնքշութիւնը որ սփռուած է Հաշտութեան արձանի երեսին վրայ, ի միտ առնելու է, թէ ինչ ներշնչութիւն ունեցաւ Կեփիսոդոտոս իր հանճարեղ Պրաքսիտեղէս որդւոյն վրայ և պատրաստեց անոր ձեռքը քանդակելու գլուխ գործոցներ, որուն ցարդ հաւասարող մը չեղաւ։

Թիլ աւանի շրջակայքը գտնուած մեր Անահիտի կամ Աստղկան պղնձէ գլուխը շատ մը նմանութիւններ ունի Հաշտութեան արձանին հետ. որովհետեւ երկուքն ալ ձուլածոյ են՝ բաղդատութիւնը և հեղինակի անձնաւորութիւնը փոքր ի շատէ որոշելը աւելի հեշտ է, քան Պրաքսիտեղէսի մարմարեայ արձանին հետ եղած համեմատութիւնը։

Հաշտութեան արձանի մազերու սանտրուածքը և յարդարուածքը նման է Անահտայ գլխուն. կլոր շրջանակ մը կ՝ամփոփէ վերէն վար սանտրուած գագաթի մազերը մինչեւ ականջներուն վրայ, յետոյ ճակատին վրայ երկուքի կը բաժնուին ծամերը և ալէձեւ յարդարուած, ականջին կէսը ծածկած՝ տարուած է դէպ ի ետեւ և ծոծրակին վրայ հանգոյցով մը զսպուած, և վարսերը ոլորձուն մինչեւ ուսերուն վրայ կ՝իջնեն, աչքերը պարապ կ՝երեւին՝ բայց երբեմն անշուշտ ագուցուած էին ակունքով մը, քիթը ճակտէն ուղիղ կ՝իջնէ և կը ծածկէ պինչերը, բերանին գեղեցիկ կերպով բացուած շրթունքները խօսելու դիրքի մէջ են, ծնօտը լեցուն և բոլորշի կը վերջանայ դէպ ի վեր կլոր կլափով։

Այս համեմատութիւնը չի ժխտեր որ մեր Անահտայ գլուխն ալ ուղղակի Պրաքսիտեղէսի գործն ըլլայ և կամ հօրը գործակցութեամբ շինուած ըլլայ։ Անահտայ գլուխը, ըստ պատկերին որ հոս աչքի առջեւ ունինք իր ամբողջութեամբը, նուրբ գծերովը, բոլորշի ձեւերովը, փափկիկ շրթունքներովը, պզտիկ բերանովը, դէպ ի վար կախուած գանգուրներովն այնպիսի կանացի երեւոյթ մ՝ունի, խառն այրական կորովութեան և լրջութեան հետ, որ յատուկ է աստուածուհւոյ մը որ սահմանուած է պաշտօն և երկրպագութիւն ընդունելու և ոչ հրապուրելու օտար մտածութիւններով իրեն մօտեցող եւ զինքն համբուրող ուխտաւորները։

Մէկ բան մեզի կասկածիլ կու տայ որ այս Անահիտը չէ գուստր Աբրամազդի կոչուածը (Պարթենոսը), այլ ազեղնաձիգ Արտեմիսը, կարակնակերտ ճակտին վրայ երկու երկհիւղ մահիկաձեւ ծամերուն համար։ Ասոր ալ գլխուն մազերը վերէն վար սանտրուած է և պակով մը ծոծրակին վրայ ամփոփուած, և լայն փունրակին վրայ ամփոփուած՝ գալարաձեւ կ՝իջնեն ուսերուն վրայ. վառվռուն աչքերը որոշ կէտի մը սեւեռածի պէս է, ժպիտը տարածուն երեսին վրայ և երկթերթիկ փարուկ շրթներուն բացուածքը կարծես թէ խօսելու կամք ունի, ինչպէս Հաշտութեան արձանի աչքերն ու շրթունքները՝ մանուկ Պղուտոնի հետ. ռունգներու բացութիւնը կը թուի թէ լուսազրողի կամքէն առաջ եկած է, որովհետեւ ուզեր է պարանոցին հետ բովանդակ երեսն իր կլորութեամբ, և մազերու գանգուրները մինչեւ ուսերն հանել։ Վասն զի անկարելի է որ այդքան չնաշխարհիկ գեղեցկութեամբ և արուեստով կերտող արուեստաւորը ռունգերն ուղղահայեաց քթին սահմանէն դուրս բաց ուղղուած ըլլայ, բան մը որ գեղեցկագրական տեսակէտով ազեղ է. մեր

digitised by A.R.A.R.@



Զրուանեան Աստղիկը կամ Անահիտը փառքն Հայոց

Եփրատ և Գայլ գետերու հովիտներուն մէջ, Հայոց թագաւորները չենած էին իրենց մեհենատեղիքը, ինչպէս Անիի մէջ Վանատուր Արամազդինը, Երիզայի մէջ Արտեմիսինը և Թիւ աւանի մէջ Մայր Անահիտինը. վերջինս կը զտնուէր Գայլ գետի աջ ափին վրայ։ Ահա այդ կողմերը զտնուած է իբր 1600 տարի առաջ Վարդավառի ջրով մկրտուած և հայացած և սերտ սիրով պաշտուած նաղելի Աստղիկի գլուխն և ձեռքերը։ Հիմա ոչ սերը և ոչ նպովքը, որ զինքը խորտակել տուաւ, կը յուզէ գեղոյի սիրտը, այլ հարատար արուեստի գեղեցկութիւնը միայն կը շարժէ հասարակաց զարմանքն և հիացումը։ Եւ մենք Հայերս պարծանքով և նվարտութեամբ յիշելու ենք արդիւնքը մեր խմաստուն նախնեաց, որոնք գիտցեր են ազնուացնել ազգին հաշակը Աթէնքի հրաշալի արուեստովը, որուն սկզբնագիր արտադրուածներն անհետացեր են, և մենք և եւրոպացիք, անոնց չնորհիւ, կը յաղեցնենք մեր աչքերը և կը պարարենք մեր մտքերը սեւ և գեղեցիկ լեարտսին պատկերը գիտելով։

ըսածին ճշմարտութիւնն յայտնապէս նըշմարելի է աջակողմեան գիմակէսին վրայ։ Լուսանկարած պատկերին վրայէն դժուար է գուշակել նաեւ գլխուն դիրքը. հաւանօրէն դէպ ի ձախ թեթեւ մը հակուած էր, ձախ թեւին կողմը, որ շարժման մէջ է իլայն մարմէն վար առնելու, մինչ մեքենաբար միւս ձեռքը կը տանի գոգը ծածկելու։ Եւ կը ժպտի միանգամայն՝ իր մերկ պատկերը տեսնելով աւազանի հայելիին մէջ, ինքնիրեն կը հաւնի որ շատ գեղեցիկ է։

Որքան ալ գեղեցիկ և գլուխգործոց մ՝ըլլայ մեր Անահիտի պղնձէ արձանը, անկարելի է որ այս մերկ վիճակին մէջ (եթէ շապիկ չեն հագցուցած) սա եղած ըլլայ այն Աթենասի պատկերը, որ էր զգաստութեան մայրը և մեծ Տիկինն Հայոց, զոր այնքան կը գրուատէ Տրդատ և կը սիրէ զԳրիգոր երկրպագելու։

Հայաստանի Մայր Անահիտը, որ պարկեշտութիւն և պատկառանք կը ներշընչէր, կը համարիմ եղած ըլլայ մեզի հասած Անահիտներու մէջէն նման Հոպէ և Ֆառնէզէ, որուն նկարը տուինք, կամ Վէլլեսրեի կոչուած Աթենասներուն։

Թիլն աւանի շրջակայքը գտնուած Անահիտը կը փակէ հեթանոսական դիցպատկերներուն գեղարուեստի շրջանը, զրս մեր թագաւորները Փոքր Ասիայէն և Եւլաղայէն բերին և քանի մը դար Հայաստանի պարծանքն եղան։

(Շարունակելի)

Հայաստանի կեցուցիչ Անահիտն անչուշտ ասոր նմանը եղած ըլլալու է, որուն երեսին վրայ կանացի նրբութեան հետ աքանչելիօրէն կը զուգակցի ըջութիւնը։

Արձանը կը գտնուի Գիկտէն (Բրիւքման)

Հ. Գ. ՆԱՀԱՊԵՏԵԱՆ

ՀԱՅԿ ԳՐԱԴԱՐ
Библиотека
ՀԱՅԿ
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

digitised by A.R.A.R.@